ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

<<ԵՐԵՎԱՆԻ Հ.144 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳԾՈՎ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼԻ

2021-2022ՈՒՍՏԱՐԻ

2021 – 2022 ուստարվա
Հ. [redacted]հիմնական դպրոցի ուսումնական աշխատանքների պլանավորման խնդիրներն ու նպատակները

2021-2022 ուսումնական տարին, դպրոցն իր աշխատանքային գործունեությունը կսկսի մեծ ակնկալիքներով և նոր սպասումներով: Մեզանից յուրաքանչյուրը ուսումնական տարվա ավարտին, ի մի է բերում իր կողմից կատարած աշխատանքները և լրջորեն է գնահատում արված կամ թերացած գործերը՝ փորձելով գալիք ուստարում աշխատանքի նկատմամբ լինել պահանջկոտ և դրանք ծառայեցնել աշակերտների դաստիարակության, ուսման առաջադիմության և որակը բարձրացնելու նպատակին:

Այսօր փոփոխվող ժամանակակից աշխարհը, համաշխարհային զարգացումների դարաշրջանը, որը խորհրդանշվում է նոր գիտելիքների ինտենսիվ ստեղծմամբ, իր ազդեցությունն է ունենում կրթության ոլորտի վրա: Նոր պայմաններում կրթության դերի վերափոխումը ու որակի բարելավումը դառնում է անհրաժեշտություն:

Այսօր անհրաժեշտ է, որ կյանք մտնող անհատը ունենա ոչ միայն գիտելիքների պաշար, այլև կարողանա այդ գիտելիքները համապատասխանաբար կիրառել կարողություններ և հմտություններ:

Ժամանակակից մանկավարժությունը մշտապես թարմացվում է: ուսուցումն ու դաստիարակությունը դիտարկելով որպես կրթության միասնական գործընթաց, մենք մանկավարժներս մեր ներուժը ներդնում ենք աշակերտների մոտ գիտելիքների և արժեհամակարգերի բովանդակությունը նպատակաուղղելու հասարակական հարաբերություններում նրանց ինքնուրույնության զարգացմանը, ինչպես նաև շարունակական կրթության ձգտման խթանմանը:

Յուրաքանչյուր դպրոցի կրթության որակը բնութագրվում է ուսուցիչների մասնագիտական և մեթոդական պատրաստվածության աստիճանով, ինչպես նաև նրանց կողմից ստանձնած աշխատանքի նկատմամբ ունեցած մեծ պատասխանատվությամբ:

Նախորդ ուստարում դպրոցի մանկավարժական կոլեկտիվի ուղենիշը նպատակաուղղված էր եղել սովորողների հայեցի կրթության և հայրենանվեր դաստիարակության գործին: Հավատարիմ մնալով իր սկզբունքներին, գալիք ուստարում դպրոցն իր առջև խնդիր է դնում աշխատել Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրության դրույթներով և պահանջներով՝ հանրակրթական ուսումնական ծրագրերի հենքի վրա ձևավորելու սովորողների անհատականությունը, նրանց նախապատրաստելու ինքնուրույն կյանքի և աշխատանքի:

Նախորդ ուսումնական տարվա տարվա սկիզբը անսովոր էր այն առումով, որ կորոնավիրուսի համավարակի պատճառով համաշխարհային կրթական համակարգը ենթարկվեց մեծ ցնցումների՝ այդ թվում նաև Հայաստանը: COVID 19-ի համավարակի պայմաններում կրթության բավարար ապահովումը դժվարություններ առաջ բերեց հանրապետության բոլոր բնագավառներում՝ այդ թվում կրթության ոլորտում:

Ուսումնական տարին հաջողությամբ սկսելը պայմանավորված է եղել դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների զարգացման պլանի, կայուն դասացուցակի, հաստատված առարկայական թեմատիկ պլանների, մանկավարժական խորհրդի և դասագրքերով ապահովված լինելու հանգամանքներով:

Ուստարվա ընթացքի, աշխատանքային շաբաթվա տևողության փոփոխություններից, ինչպես նաև կորոնավիրուսի համավարակից առաջացած դժվարությունները հաղթահարվեցին ճիշտ և նպատակադրված աշխատանքների շնորհիվ:

Այսօր հանրակրթության ոլորտում աշխատող առաջատար մասնագետների կողմից հանձին ԿԳՄՍ նախարարի, մշակվում են նոր ուսումնական մոդել, որի արդյունքում սպասվում են մի շարք բարեփոխումներ դպրոցների, ուսուցիչների և աշակերտների համար, այդ թվում հանրակրթական պետական չափորոշիչների, ուսումնական բնագավառների և ուսումնական ծանրաբեռնվածության ծավալների կրճատման, գնահատման համակարգի սկզբունքներում, ուսուցիչների աշխատավարձի չափի կախվածությունը ատեստավորման արդյունքներից և շատ այլ արդյունավետ բարեփոխումներ:

Դպրոցում գալիք ուստարում շարունակվելու է ստեղծվել սովորողների կրթության պահանջների բավարարման համար անհրաժեշտ պայմաններ՝ նրանց հոգեբանական պաշտպանվածություն և աջակցություն ցուցաբերելու նպատակով: Դպրոցում յուրաքանչյուր սովորողի կնձերվի ինքնագնահատվելու և ինքնահաստատվելու հնարավորություն, որոնք կաջակցեն նրանց կարողությունների և ընդունակությունների բացահայտմանը: Դպրոցում առանձնահատուկ ուշադրություն կդարձվի տարրական կրթությանը, քանի որ առաջին աստիճանի դպրոցը կոչված է ապահովելու անհատի ձևավորման սկզբնական շրջանին անհրաժեշտ հիմնավոր գիտելիքներով, իսկ կրթության հաջորդ աստիճանում աշակերտների մոտ կապահովվի նրանց հետաքրքրություններին, նախասիրություններին և ընդունակություններին համապատասխան կրթություն: Առանձնահատուկ ուշադրություն և հոգատարություն կցուցաբերվի ներառական կրթության մեջ ներառված սովորողների հանդեպ:

Ճիշտ Այսօր դպրոցում կրթության և դաստիարակության գործընթացներին մասնակից են դառնում բոլոր նրանք, ովքեր պատասխանատվություն են կրում ստանձնած գործի նկատմամբ:

Իրողություն է, որ դպրոցում ուսումնական գործընթացին սահուն ընթացք են ապահովում մի շարք կազմակերպչական և ուսումնական աշխատանքների պլանավորումը: Նշված ժամկետներում նախատեսված աշխատանքների ճիշտ կազմակերպումը և իրականացումը հնարավորություն կտա ուսումնական տարին արդյունավետ կազմակերպելու: Դասարանների կոմպլեկտավորումը, դասղեկների նշանակումը, դասասենյակների նախապատրաստումը, վերաբեռնությունների անցկացումը, կայուն դասացուցակի առկայությունը, մեթոդմիավորումների ձևավորումը, էլեկտրոնային դասամատյանների գործածությունը, դասագրքերի վերաբաշխումը, աշխատանքային ռեժիմի հաստատումը, դպրոցի 2021-2022 ուստարվա համար հաստատված ուսպլանը և դասաբաշխումը՝ այս ամենը կծառայեն ուսումնական տարին հաջողությամբ սկսելու նպատակին: Նաև դպրոցի յուրաքանչյուր օղակի աշխատաքային պարտականությունների ստանձնումը և դրանց միջև համագործակցումը ևս կբարելավեն ներդպրոցական աշխատանքների որակական կողմերը: Ուստարվա ընթացքում ուսուցիչներին մեթոդամանկավարժական օգնություն ցուցաբերելու նպատակով դասալսումների և դրանց վերլուծությունների միջոցով հետևողականություն կցուցաբերվի ծրագրային թեմաների որակական և քանակական կատարմանը, թեմատիկ և գործնական աշխատանքների անցկացման որակական կողմին, օգնելու ուսուցիչներին բարձրացնելու իրենց մանկավարժական վարպետությունը, նախապատրաստել մասնակցելու վերապատրաստ-ման դասընթացներին: Կվերահսկվի

էլեկտրոնային դասամատյանների, աշակերտների տնային հանձնարարությունների ծավալային չափերը, բնույթը և դրանց կատարումը: Յուրաքանչյուր կիսամյակի ավարտին կկատարվի վերլուծություն և կամփոփվի դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքները՝ հաշվետու լինելով մանկավարժական խորհրդին: Ուսումնական տարին բարեհաջող ավարտին հասցնելու նպատակով կամփոփվի յուրաքանչյուր դասարանի ուսման առաջադիմությունը և որակական կողմը, քննական դասարանների աշակերտները կնախապատրաստվեն գիտելիքների ստուգումներին և ավարտական քննություններին՝ նրանց կիրազեկվի քննությունների աշխատակարգին և ժամանակացույցին: Քննությունների ավարտին կամփոփվի դրանց արդյունքները՝ ի մի կրերվեն արձանագրված հաջողություններն ու ձեռքբերումները, ինչպես նաև թերությունները: Ավարտական դասարանի աշակերտներին դպրոցը հրաժեշտ կտա վկայականների հանձնման արարողությամբ:

Այսպիսով դպրոցում յուրաքանչյուր աշխատանք պլանավորելիս պետք է հետամուտ լինել նրա կատարմանը: Գալիք ուստարվա աշխատանքները պետք է ծառայեցնել դպրոցի ուսումնամեթոդական աշխատանքների բարելավման գործին:

2021-2022 ուստարում շարունակելով իրականացնել ռուսերենի խորացված ուսուցում, դպրոցի գործունեության հիմնական նպատակը հանրակրթական ուսումնական ծրագրերի պարտադիր նվազագույնի յուրացման հիման վրա սովորողների մոտ ձևավորելու անհատականություն, նրանց նախապատրաստելու ինքնուրույն կյանքի: Եվ ամենակարևորն է հայեցի դաստիարակությունը նպատակաուղղել ազգային արժեքները պահպանելու, գիտելիքներն ու փորձը յուրացնելու, պահպանելու և սերունդներին փոխանցելու գործին:

հ/հ	Վերահսկողության ենթակա աշխատանքներ	Վերահսկողության նպատակը	Կատարման ժամկետը
1.	Մասնակցություն դպրոցի 2020-2021 ուստարվա կատարված աշխատանքների ամփոփմանը և նոր ուստարվա ուսումնադաստիարակչական աշխատանքային պլանի նախապատրաստմանը:	Ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացում	Օգոստոս
2.	2.44. հիմնական դպրոցի ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի 2021-2022 ուստարվա աշխատանքային պլանի կազմում:	Ուսումնական գործընթացի կազմակերպում	Օգոստոս
3.	Իրազեկում մանկավարժներին՝ ՀՀ կառավարության որոշումներին, հանրակրթության օրենքից բխող պահանջներին և այլ նորմատիվ փաստաթղթերին:	ՀՀ կառավարության, Հանրակրթության մասին օրենքին վերաբերող որոշումների կատարման ապահովում:	Ուստարվա ընթացքում
4.	2020-2021 ուստարում տարեկան անբավարար գնահատված ու առաջադրանքներ ստացած աշակերտների վերաքննությունների կազմակերպում և անցկացում:	Աշակերտների հետ անհատական ուսուցման աշխատանքներ իրականացնող մանկավարժների գործունեության վերլուծություն:	Օգոստոս 23-30ը
5.	Դասարանների կոմպլեկտավորում:	ՀՀ «Հանրակրթության մասին» օրենքի և դպրոցի ընդունելության կարգի պահպանում:	Սեպտեմբերի 1-ի տվյալներ
6.	Ուսումնական աշխատանքների նախապատրաստման և իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերի նախապատրաստում:	Ուսումնական գործընթացի կազմակերպում:	Օգոստոս - սեպտեմբեր
7.	Ծանոթացում կորոնավիրուսային հիվանդության պայմաններում դպրոցի գործունեության ուղեցույցին, ուսումնական ծրագրերի, չափորոշչային պահանջների, դասագրքերի վերջին փոփոխություններին, դրանց շուրջ քննարկումները առարկայական մասնախմբերի նիստերում:	Պետական հանրակրթական չափորոշիչների պահանջներին համապատասխան կրթության մակարդակի իրագործման վերահսկում:	Օգոստոս - սեպտեմբերի 10-ը
8.	2021-2022 ուստարվա մեթոդմիավորումների ձևավորում, նախագահների առաջադրում և հաստատում մանկավարժական խորհրդի նիստում:	Մեթոդմիավորման կանոնակարգի պահպանում:	Օգոստոսի 27-30-ը
9.	Նոր ուսումնական տարվա դպրոցի ուսպլանի ծանոթացում և հաստատում մանկավարժական խորհրդի նիստում՝ հաշվի առնելով կորոնավիրուսային հիվանդությամբ պայմանավորված, համավարակի պայմաններում դպրոցի գործունեության կազմակերպումը ուղեցույցի պահանջներին համապատասխան:	Առաջնորդվել 2021-2022 ուստարվա ռուսերենի խորացված ուսուցման ուսպլանի պահանջներով:	Օգոստոսի 27-30-ը

	Վերահսկողության ենթակա աշխատանքներ	Վերահսկողության նպատակը	Կատարման ժամկետը
10.	Առցանց համակարգով առաջին դասարան դպրոց ընդունված աշակերտների կոմպլեկտավորում /25 աշակերտ/:	22 Հանրակրթության մասին օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների ապահովում:	Մինչև օգոստոսի վերջ
11.	Դպրոցի 2021-2022 ուստարվա ռուսերենի խորացված ուսուցման ՈՒՍՊԼԱՆ-ի դպրոցական բաղադրիչով սահմանված ժամաքանակի բաշխում՝ հաշվի առնելով մեթոդմիավորումների առաջարկությունները, հաստատել մանկավարժական խորհրդի նիստում:	Առաջնորդվել 2021-2022 ուստարվա ռուսերենի խորացված ուսուցման ուսպլանի պահանջներով:	Օգոստոսի 25-30-ը
12.	2021-2022 դասաբաշխման կազմում՝ հաշվի առնել մեթոդմիավորումների առաջարկությունները, հաստատել մանկավարժական խորհրդի նիստում:	Ուսուցիչներին տեղեկացնել դասաբաշխումով հատկացված դասաժամերը:	Օգոստոսի 25-30-ը
13.	Դասացուցակի կազմում, հաշվի առնել համաճարակային իրավիճակի պայմանները, առաջնորդվել 2021-2022 ուստարվա ուսպլանի պլանի, 5-օրյա ուսուցում կազմակերպելու պահանջները, ապահովել ամբողջական դասարաններով ուսումնական ծանրաբեռնվածություն և ներկայացնել տնօրենի հաստատման:	2021-2022 ուստարվա ուսպլանի պահանջների ապահովում:	Մինչև օգոստոսի 31-ը
14.	Դպրոցի աշխատանքային ռեժիմի կազմում, հաստատել մանկավարժական խորհրդի նիստում՝ 5-օրյա աշխատանք Դասերի սկիզբը՝ 8.30-ին Աշխատանքի ավարտը՝ -ին	2021-2022 ուստարվա ուսպլանի պահանջների ապահովում:	Օգոստոսի վերջ
15.	Կոմպլեկտավորված դասարանների բաշխում:	Լիազոր մարմնի գրավոր թույլտվություն և 18.09.20թ. ԱՆ հր24-Ն	Օգոստոսի վերջ
16	Ուսուցիչների աշխատաժամանակի բաշխում՝ հաշվի առնելով նրանց շաբաթական ժամաքանակի ծանրաբեռնվածությունից և դասացուցակի ընձեռած հնարավորությունից:	22 կառավարության որոշում	Սեպտեմբեր
17.	Բացակա ուսուցիչների հաշվառում, բացթողնված և փոխարինած դասաժամերի արձանագրում՝ և ժամավճարային հաշվարկների ներկայացում էլեկտրոնային տարբերակով:	Դպրոցի կանոնադրության պահանջ:	Ուստարվա Ընթացքում
18.	Դպրոցի գրադարանային ֆոնդից ծանոթանալ 2021-2022 ուստարում գործող դասագրքերին: Դասագրքերի բաշխման վերահսկում:	Գրադարանային ֆոնդում դասագրքերով համալրման ապահովում:	Ուստարվա սկիզբ
19.	Դասասենյակներում սովորողների տեղաբաշխման համապատասխանեցում՝ համավարակի պայմաններից ելնելով և Ան պահանջներին համապատասխան:	Լիազոր մարմնի գրավոր թույլտվություն և 18.09.20թ. ԱՆ հր24-Ն	Ուստարվա սկիզբ

	Վերահսկողության ենթակա աշխատանքներ	Վերահսկողության նպատակը	Կատարման ժամկետը
20.	Ուսուցիչների մեթոդմիավորումների նիստերում քննարկված 1-ին կիսամյակի 15 շաբաթ տևողությամբ թեմատիկ պլանների ուսումնասիրում, երաշխավորում և տնօրենի կողմից հաստատում:	Հանրակրթական պետական չափորոշիչների պահանջների պահպանում:	Միևնույն սեպտեմբերի 10-ը
21.	Միավորային գնահատման բաղադրիչների բանավոր հարցման, թեմատիկ և կիսամյակային գրավոր աշխատանքների քանակի ապահովում ըստ կիսամյակների, հաշվի առնել մակխորհրդում ընդունված որոշումը:	Գնահատման չափանիշների նորմերի ապահովում, ուսարդյան 21 կետի պահանջ.	1-ին և 2-րդ կիսամյակներ
22.	Մեթոդմիավորման նախագահների հետ համատեղ իրականացնել աշխատանքներ սովորողների գիտելիքների որակը բարելավելու, դասավանդման արդյունավետությունը բարձրացնելու, աշակերտների կարողություններն ու հմտությունները զարգացնելու ուղղությամբ՝ հաշվի առնելով համավարակի պատճառով առաջացած իրավիճակը:	Ուսուցման որակի արդյունավետության բարելավում և համակարգում:	Ուստարվա Ընթացքում
23.	Անցկացնել առարկայական մասնախմբերի դեկավարների խորհրդակցություն: Լսել մասնախմբերի նախագահների հաշվետվությունները կատարած աշխատանքների մասին, տալ համապատասխան հանձնարարություններ:	Մեթոդմիավորումների նախագահներին ներկայացվող պահանջների ապահովում	Յուրաքանչյուր կիսամյակ
24.	Սոցիալապես անապահով ընտանիքի երիտասարդների հաշվառում: Դպրոցում նրանց համար բավարար պայմանների ստեղծում, անվճար դասագրքերով ապահովում:	Երևանի քաղաքապետարանի որոշման ապահովում	Ուստարվա սկիզբ
25.	Ուսումնադաստիարակչական բոլոր աշխատանքներում առաջնորդվել դպրոցի կանոնադրության պահանջներով:	Դպրոցի կանոնադրության պահանջների ապահովում	Մշտապես
26.	Առարկայական թեմատիկ պլանների, առարկայական չափորոշչային պահանջների, գնահատման նորմատիվների, գրավոր աշխատանքների կատարողականի և որակական կողմի ընթացիկ վերահսկողություն:	Ուսումնական գործընթացի համակարգում	Ուստարվա ընթացքում
27.	Աշակերտների անհարգելի բացակայությունների վերահսկում: Յուրաքանչյուր ամիս արդյունքները քննարկել դասղեկական և աշակերտական խորհուրդների նիստերում: Աշխատանք տանել սահմանված ժամաքանակից ավել բացակայած աշակերտների հետ:	Ապահովել ՀՀ Հանրակրթության մասին օրենքի 16-րդ. 11 կետի պահանջները	Մշտապես
28.	Ըստ ուսպլանի և ուսումնական առարկաների ծրագրային, ուսուցանվող նյութի բովանդակային ու դասավանդման մեթոդական պահանջների, միջին դասարաններում տարբեր առարկաներից համակարգչային դասարաններում անցկացվող դասերի վերահսկում:	Ուսպլանի պահանջների ապահովում	Ուստարվա ընթացքում

	Վերահսկողության ենթակա աշխատանքներ	Վերահսկողության նպատակը	Կատարման ժամկետը
30.	Առարկայական օրերի և շաբաթների առցանց կամ առկա կազմակերպում՝ պահպանելով համավարակի կանոնները. ա/ Մայրենիին նվիրված օրեր բ/ Ռուսաց լեզվին նվիրված օրեր գ/ Գեղանկարչության օրեր	Ուսումնական գործընթացի համակարգում, դասի արդյունավետության բարձրացման, ուսումնական առարկաների նկատմամբ սովորողների հետաքրքրության և ստեղծագործական մտածողության զարգացման ապահովում:	Փետրվար Ապրիլ Մայիս
31.	Դասալսումներ տարաբնույթ և տարանպատակ՝ ա/Դասպրոցեսին ուսուցչի դերը աշակերտների գիտելիքների որակական ցուցանիշները խթանող, կայուն գիտելիքներ ձևավորելու ուղղությամբ տարվող աշխատանքներ. բ/ Դասապրոցեսին աշակերտների հայեցի դաստիարակության, հայոց լեզվի անաղարտության և ազգային ինքնության պահպանման ուղղությամբ իրականացվող աշխատանքներ ա/ Փորձառու ուսուցիչների փորձի փոխանակում բ/ Սկսնակ ուսուցիչներին մեթոդական աջակցություն գ/Ավարտական դասարաններում քննություններին պատրաստվածության գնահատում:	Հաստատագրական չափորոշիչների պահանջների իրագործման մակարդակի վերհանում	Ուստարվա ընթացքում
32.	Մանկավարժների գործունեության վերահսկողություն փոխադարձ դասալսումների կազմակերպում, դրանց քանակի ու գրանցումների իրականացում:	Առաջավոր փորձի փոխանակում	Ուստարվա ընթացքում
33.	Պարբերաբար ստուգել դասին ուսուցիչների պատրաստվածությունը, խթանել օրվա դասի պլանի գործածումը, բարձրացնել դրանց կիրառական արդյունավետությունը:	Ուսուցչի գործունեության ուսումնասիրում	Ուստարվա ընթացքում
34.	Վերահսկել ուսուցիչների աշխատանքային գործունեության ոլորտները. ա/Ծրագրային նյութերի կատարողականները և գնահատման սկզբունքները, բ/Բաց դասերի և փոխադարձ դասալսումների գործընթացները, գ/Սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների համապատասխանությունը չափորոշչային պահանջներին:	Ուսուցիչների գործունեության վերլուծություն	Ուստարվա ընթացքում
35.	Հրավիրել խորհրդատվություններ, քննարկումներ ուսուցման, գնահատման, կիսամյակային և տարեկան ամփոփումների, փոխադրման և ավարտման կարգի, քննությունների և վերաքննությունների կարգի, էլեկտրոնային դասամատյանների վարման կարգի, մանկավարժական մեթոդիկայի նորությունների, տարիքային հոգեբանության, արժեքային համակարգի ձևավորման, սովորողների և աշխատողների ներքին կարգապահական և այլ հարցերի վերաբերյալ:	Ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետության բարձրացում: Հաստատագրական չափորոշիչներին պահանջների իրագործման մակարդակի վերհանում	Ուստարվա ընթացքում

	Վերահսկողության ենթակա աշխատանքներ	Վերահսկողության նպատակը	Կատարման ժամկետը
36.	Վերահսկում էլեկտրոնային դասամատյաններում ուսուցիչների կողմից իրականացվող աշխատանքների. ա/Հաճախումների հաշվառում բ/ Գնահատում գ/ Թեմատիկ պլանների մուտքագրում դ/ Թեմատիկ և կիսամյակային գրավոր աշխատանքների գնահատականների մուտքագրում	ԿԳՄՍ նախարարի 08.09.2020թ. N 28-Ն հրամանի կատարման ապահովում	Ուստարվա ընթացքում
38.	Գրավոր աշխատանքներ տնօրինության կողմից ելնելով իրավիճակից. ա/ Հայոց լեզու /թելադրություն / բ/ Ռուսաց լեզու /թելադրություն / գ/ Հայոց պատմություն / թեստ /	Սովորողների ընթացիկ գիտելիքների, կարողությունների, հմտությունների որակական կողմի ուսումնասիրում	1-ին և 2-րդ կիսամյակներ
39.	Դպրոցականների առարկայական օլիմպիադաների նախապատրաստում և իրականացում, դրանց արդյունքների ամփոփում և քննարկումներ մեթոդմիավորումների և մանկավարժական խորհրդի նիստերում. ա/ դպրոցական փուլ բ/առցանց փուլ մաթեմատիկա և բնագիտական առարկաներ գ/ տարածքային փուլ դ/ մարզային փուլ ե/ հանրապետական փուլ զ/ ամփոփում	Օլիմպիադաներին ուսուցիչների և աշակերտների մասնակցության ապահովում	դեկտեմբեր հունվար փետրվար մարտ
40.	Աշակերտների մասնակցությանը Մեղու, Կենգուրու, Ռուսական արջուկ միջազգային մրցույթներին, արդյունքների ամփոփումը մանկավարժական խորհրդի և մեթոդմիավորման նիստերում:	Մրցույթներին աշակերտների մասնակցության ապահովում	1-ին և 2-րդ կիսամյակներ
41.	Դասասենյակներում հրդեհայնից բխող սանիտարական, ախտահանիչ, անվտանգության կանոնների պահպանման վերահսկում:	Անվտանգութեան նորմերի և սանիտարական պայմանների պահպանում	Ուստարվա ընթացքում
42.	Վերապատրաստման կարիք ունեցող մանկավարժների ցանկի հստակեցում և նրանց իրազեկում ըստ սահմանված կարգի:	Ուսուցիչների որակավորման բարձրացում	Ըստ նշված ժամանակացույցի
43.	Առարկայական մեթոդմիավորումների փաստաթղթային տնտեսության և կատարած աշխատանքների կատարողականի որակական կողմի ապահովում:	Ուսումնական աշխատանքների ապահովում	Ուստարվա ավարտ
44.	Տեղեկատվական տեխնոլոգիաների, տեխնիկական միջոցների և սարքավորումների, ուսումնական հարթակների օգտագործումը ուսուցման գործընթացում որպես դասավանդման արդյունավետությանն աջակցող միջոցներ:	Տեղեկատվական տեխնոլոգիաների ապահովումը ուսումնական գործընթացում	Ուստարվա ավարտ

	Վերահսկողության ենթակա աշխատանքներ	Վերահսկողության նպատակը	Կատարման ժամկետը
46.	Աշակերտների շրջանում ռազմահայրենասիրական դաստիարակության զարգացում. Մեր դեպի հայրենիքը, ազգային արժեքները, խորհրդանիշները և մշակույթը: Ռազմագիտության դասերին աշակերտների մոտ ռազմական պատրաստակամության և պատրաստականության դրսևորումների ձևավորում:	Զինապարտության մասին օրենքի դրույթների պահպանում	Պարբերաբար
47.	8-9-րդ դասարաններում «Առողջ ապրելակերպ» դասընթացի կազմակերպում և վերահսկողություն:	2021-2022 ուստարվա ուսպլանի 42-րդ կետի պահանջների ապահովում:	Փետրվար 2022թ.
48.	Պարտուսից խուսափող աշակերտների հետ աշխատանքների կազմակերպում՝ հանդիպումներ ոստիկանության անչափահասների բաժնի աշխատակիցների հետ:	Աշակերտների ուսման մեջ ներգրավվածության ապահովում	Անհրաժեշտության դեպքում
49.	Ինքնակրթության ուղղությամբ մանկավարժների գործունեության համակարգում:	Ուսուցիչների որակավորման բարձրացում	Ուստարվա ընթացքում
50.	1-ին կիսամյակի ավարտին մանկավարժական խորհրդի նիստում աշակերտների ընթացիկ առաջադիմության ամփոփում	Կիսամյակի առաջադիմության վերլուծում, սովորողների գիտելիքների գնահատում:	Դեկտեմբեր 2021թ.
51.	Ծնողների ներգրավումը դպրոցում կազմակերպվող իրավագիտական, մանկավարժական, հոգեբանական զրույցներին և դասախոսություններին:	Մանկավարժա-հոգեբանական գիտելիքների հարստացում:	Ուստարվա ընթացքում
52.	Դպրոցի և ծնողների համագործակցությունը ապահովելու նպատակով հանդիպումների կազմակերպում՝ սովորողների ուսման և դաստիարակության բարելավման նպատակով:	Դպրոցի և ընտանիքի կապի ապահովում	Պարբերաբար
53.	Արտադպրոցական դաստիարակչական աշխատանքներում ծնողների ներգրավվածության ապահովում:	Դաստիարակչական որակական հատկանիշների ապահովում	Պարբերաբար
54.	Ծնողական ժողովների կազմակերպում, ուսման առաջադիմության ամփոփում:	Աշակերտների գիտելիքների ամփոփիչ վերլուծության ապահովում:	1-ին և 2-րդ կիսամյակների ավարտին
55.	22 հանրակրթության մասին օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ կետի պահանջների, ուստարվա ավարտին սահմանված ժամ դասերից ավել՝ 120-200 ժամ դասերից բացակայած սովորողների բացակայությունների ամփոփում:	Փոխադրման ավարտման կարգի պահպանում	Մինչև մայիսի 20-ը ներառյալ
56.	120-200 ժամ բացակայություններ ունեցող աշակերտների փոխադրական քննությունների կազմակերպում:	Փոխադրման, ավարտման կարգի պահպանում	Մայիսի 20-31-ը

	Վերահսկողության ենթակա աշխատանքներ	Վերահսկողության նպատակը	Կատարման ժամկետը
57.	2021-2022 ուստարվա 9-րդ դասարանցիների ավարտական ընտրովի քննությունների դիմում-հայտերի ընդունում, փաստաթղթերի կազմում և առաքում էլեկտրոնային փոստով:	Քննական կարգի պահանջների ապահովում	Փետրվար-մարտ 2022թ.
58.	Պետական ավարտական քննությունների դիմումհայտերի ճշգրտում, վերջնական հաստատում:	Քննական կարգի պահանջների ապահովում	Ապրիլ 2022թ.
59.	2021-2022 ուստարվա փոխադրման, ավարտման և քննական կարգի մասսայականացում ուսուցիչների, աշակերտների և ծնողների շրջանում:	Ուսուցիչների, աշակերտների և ծնողների իրազեկման ապահովում	Մայիս
60.	2-րդ կիսամյակի և տարեկան առաջադիմության ամփոփում, 4-րդ դաս.աշակերտներին գիտելիքների ստուգումներին և 9-րդ դաս. աշակերտներին ավարտական քննություններին թույլատրում:	Փոխադրման,ավարտման և քննական կարգերի պահանջների ապահովում	Մայիս 23-27-ը
61.	Քննությունների և նախաքննական խորհրդատվությունների, աշխատակարգի և ժամանակացույցի կազմում:	Փոխադրման,ավարտման և քննական կարգերի պահանջների ապահովում	Մինչև մայիսի 27-ը
62.	9-րդ դասարաններում ֆիզկուլտուրայի քննությունների նախապատրաստում, կազմակերպում, իրականացում և ամփոփում:	Փոխադրման,ավարտման և քննական կարգերի պահանջների ապահովում	Մինչև մայիսի 27-ը
63.	Ավարտական քննությունների քննող և ստուգող հանձնաժողովների, կազմակերպիչների ու հերթապահների կազմերի վերաբերյալ կարգացուցակների կազմում:	Փոխադրման,ավարտման և քննական կարգերի պահանջների ապահովում	Մինչև մայիսի 27-ը
64.	9-րդ դասարաններում ավարտական քննությունների կազմակերպում և անցկացում, դրանց արդյունքների ամփոփում և փոխանցում էլեկտրոնային դասամատյաններ:	Փոխադրման,ավարտման և քննական կարգերի պահանջների ապահովում	Հունիս 2022թ.
65.	4-րդ դասարանների գիտելիքների ստուգումների և 9-րդ դասարանների ավարտական քննությունների արդյունքների ամփոփում մանկավարժական խորհրդի նիստերում:	Քննությունների արդյունքների ամփոփիչ վերլուծության ապահովում:	Հունիս 2022թ.
66.	Տարեկանից և փոխադրական քննություններից 1 կամ 2 առարկաներից անբավարար գնահատված 2-9-րդ դասարանների աշակերտների ամառային առաջադրանքների հանձնարարում և իրազեկում ծնողներին.	Փոխադրման,ավարտման և քննական կարգերի պահանջների ապահովում	Հունիսի 1-10-ը

	Վերահսկողության ենթակա աշխատանքներ	Վերահսկողության նպատակը	Կատարման ժամկետը
67.	Աշակերտների անձնական գործերի լրացման ու վարման գործունեության ստուգում:	Դասղեկների աշխատանքի համակարգում և ապահովում	Հունիս 2022թ
68.	9-րդ դասարանների ավարտական վկայականների լրացում, ստուգում և բաշխում:	Սահմանված կարգի և ժամկետի պահպանում	Հուլիսի սկիզբ
69.	Ուսուցիչների և մ/մ նախագահների տարեկան հաշվետվությունների քննարկում:	Կատարողականի վերլուծություն	Հունիս
70.	2022-2023 ուստարվա ուսպլանի ծանոթացում, նախնական կոմպլեկտավորում և դասարաշխում՝ ըստ գալիք տարվա դպրոցի ուսպլանի նախագծի:	Գալիք ուստարվա նախապատրաստում	Հունիս